ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 02 Ա
04 ՀՈՒՆՎԱՐ 2023թ.

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈԼԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ՝ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 10.05.2021թ. N 56-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված «Պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 19-րդ և 20-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 28.12.2022թ N01/09.3/32941-2022 գրությամբ ներկայացված առաջադրումը և ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ղեկավարի 23.12.2022թ N 294 Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի 10.05.2021թ. N56-Ա որոշմամբ հաստատված հավելվածում, «Վայոց Ձորի մարզի Սալլիի հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության, «Վայոց Ձորի մարզի Հորսի հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «ՀՀ Վայոց ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոց»

պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման միացյալ խորհրդի կազմում «Եղոյան Վարդանուշ» բառերը փոխարինել «Հարությունյան Գվիդոն» բառերով, «Մարկոսյան Աստղիկ» բառերը փոխարինել «Մարտիրոսյան Սամվել» բառերով:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը:

1/4/2023

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Եղեգնաձոր